



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ՍԵՐՈՎՔԵ ՊԱՏԿԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱԳԵՏ ՎՐԱՑԻ ԳԱՅՈՍԸ ԱԱՏՐԱԽԱՆՈՒՄ



այ և վրացի ժողովուրդների և քաղաքական-պետական, գուական-մշակութային և այլ գործիչների փոխհարաբերությունները, բարեկամական կապերը անցյալում, անկեղծ և ամուր են եղել նաև Հայրենիքից դուռս, օտարության մեջ, ուր նրանք իրերի բերումով ավելի են մոտեցել իրար, հասկացել միմյանց և ընդհանուր լեզու գոտել:

Ահա այսպիսի գեմքերից էին Աստրախանում գրեթե միաժամանակ գործող հայ մանկավարժ և գոռող Սերովք Պատկանյանը (1760—1837 թ. թ.) և վրաց գործիչ, նույնպես մանկավարժ, երրեմն թելավի սեմինարիայի տեսուշ և հետագայում կուսակրոն հոգևորական ու քարձրաստիճան եկեղեցական Գայլոսը (1746—1821 թ. թ.), որոնց փոխհարաբերությանց մասին ցարդ ոշինչ հայտնի չէր:

1809—1827 և 1836—1837 թվականներին Ս. Պատկանյանը պաշտոնավարում է Աստրախանում, նաև 1809—1821 թվականներին իրեւ նորաբաց Ազարյան դպրոցի ավագ ուսուցիչ, իսկ 1821—1827 թվականներին նորաբաց հոգևոր վարժարանի ուսուցիչ: Հեռանալով Աստրախանից 1827 թվականին, նա նորից վերադառնում է այնտեղ 1836 թվականին և մնում այնտեղ մինչև իր մահը (1837):

Ս. Պատկանյանի գրական գործունեությունը, ինչպես հայտնի է, արտահայտվել է նրա բանաստեղծություններում, որոնց ընդհանուր թիվն է 29: Արանց մեջ 11-ը զուտ կրոնական բնույթի տաղեր են, իսկ մնացած 18-ը պատմական և այլ բովան-

դակությամբ խաղեր, ձոներ և այլն¹, որոնց բնութագիրը տախիս է Հր. Աճառյանը այսպիս: «Պատկանյանի պատմական տաղերը նվիրված են ոռու-տաճկակական և ոռու-պարսկական պատերազմներին: Նրա երգերին նյութ են դարձել Տփղիսի ավերումը Պարսից ձեռքով, Ձիցիանովի հաղթանակը, Գանձակի առումը, Դավիթ-Դանիելյան վեճերը, Էջմիածնի ազատությունը և այն: Գովարանական տաղերը նվիրված են ժամանակակից նշանավոր անձերին՝ ոռուաց Աղքասանը և Նիկողայոս Ա. կայսեր, Եփրեմ Կաթողիկոսին, Ասորախանի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին և ոռուաց Գայլոս արքեպիսկոպոսին², Ներսես Աշտարակեցոյնը³ և այլն:

Նույն տարիներին, երբ Ս. Պատկանյանը ապրում և գործում էր Աստրախանում, այդտեղ պաշտոնավարելիս է եղել նաև թելավի սեմինարիայի երրեմնի տեսուշ Գայլոսը, որը հայտնի է վրաց գրականության մեջ «Դայլիոս Ռեկտորի» հորդորչումով⁴:

Վրաց գրականության մեջ Գայլոսը հիշատակվում է երեք աղջանունով՝ Բարա-

¹ «Երբգի Սերովք վարժապետի Պատկանեան, ի լոյս ընծայեալ աշխատասիրութեամբ Աւտակի Խաղեանց», Մոսկվա, 1857:

² Ընդգծումը մերն է: — Լ. Մ.-Թ.

³ Հր. Աճառյան, «Պատմութիւն Հայոց նոր գրականութեան», Վաղարշապատ, 1906, էջ 115:

⁴ Լ. Մելիքսեթ-Բեկ, «Անծանոթ նյութեր Գայլոս Ռեկտորի մասին», Թրիլիսի Պետական համալսարանի աշխատությունները, 69, Թրիլիսի, 1958, էջ 385—391 (Գրացերեն):

թաշվիլի՝ անկասկած, իսկական ազգանունն է, որը մատնանշում է նրա իշխանական (թափաղական) ժագումը, Թաղայշվիլի՝ առաջացել է նրա հոր Թաղայի անունից, հետևապես հայրանունն է և ոչ թե ազգանունը, իսկ երրորդը՝ նացվլիշվիլի՝ առաջացել է նույն իր հոր Թաղայի վրած ռնացվալիս պաշտոնից, որը բառացի նշանակում է «փոխաշտոնից», որը բառացի նշանակում է նացվալի (փոխանորդի) որդի:

Գայիսը ծնված պիտի լինի 1746 թվականի մոտերքում: Նա աշակերտել է վրաց Անտոն Ա կաթողիկոսին, որից և ստացել է 1765 թվականին սարկավագի աստիճան: 1772 թվականին ճանապարհորդել է Պետերբուրգ՝ իրու քարտուղար Վրաստանից գնացած գեսպանության և մի առժամանակ ուսանել է Ալեքսանդր Նևացու մայրավանքի սեմինարիայում, ապա Սոսկվայի հոգևոր ճեմարանում, որն ավարտել է 1778 թվականին: Կարճ ժամանակով հայրենիքում լինելուց հետո նա նորից Պետերբուրգում է, ուր 1779 թվականին ճեռնադրվում է կուսակրոն քահանա, իսկ 1780 թվականին վարդապետ: 1782 թվականին նա ստանձնում է Թելավի (Կախեթի երբեմնի մայրաքաղաքի) նորարաց հոգևոր սեմինարիայի տեսչի պաշտոնը, ուստի և ցմահ պահպանում է «Գայիս-Ռեկտորի» հորչորչությունը: 1783 թվականին նա մասնակցում է Գեորգի կակում կնքված ուսու-վրացական պայմանագրին⁵, 1784 թվականին Պետերբուրգում է, 1785—1789 թվականներին՝ Կրեմենելուգում, 1790—1792 թվականներին՝ Մոլդավիայի Յասսա քաղաքում, 1793 թվականին ճեռնադրվում է Աստրախանի թեմի մեջ մտնող Մողղոկի (Հյուսիսային Կովկասի) քորեպիսկոպոս, 1799—1803 թվականներին Պենզայի եպիսկոպոսն է, իսկ 1808—1821 թվականների միջոցին՝ Աստրախանի և Մտավրոպոլի արքապիսկոպոսը: Վահճանվել է Աստրախանում 1821 թվականի 20 փետրվարին և թաղվել է 24 փետրվարին Աստրախանի ներքեւ տաճարում:

Գայիսի կենսագրությունից առանձնապես ուշադրության արժանի է նրա որոշ մոտիկությունը, շփումը հայ իրականության հետ, այն աստիճանի, որ նա նույնիսկ ուսումնասիրել է հայերեն լեզուն, ինչպես վկայում են նրա ժամանակակից վրաց պատմիչներ:

⁵ Վ. Գրիգորյան, «Շուռական կայսրության պետական կուսպիսաների «Գլխավոր ռեզլամենտ»-ի հայերեն թարգմանության մասին», «Տեսեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի», 1956 թ., № 4, էջ 11, ժամ. 1.

Հովհաննես Բագրատիոն արքայազնը, «Կալմասորա» (=Կալի մասունք) ստվար երկասիրության հեղինակը, իր «Համառոտ հաղորդագրություն վրաց գրողների մասին» գրվածքում, որը նույն «Կալմասորա»-յի մասն է կազմում, Գայիսին նվիրում է հետևյալ տողերը. «Դայիսուը սնվեց Անտոն կաթողիկոսից փիլիսոփայական և աստվածաբանական գիտություններով: Հմուտ լինելով ուսւերենին՝ նա զիտեր նաև լատիներեն և հայերեն գիրը և ալին⁶:

Դավիթ և Բագրատ Բագրատիոն արքայազնների «Նոր պատմություն» և «Նոր պատում» կոչված երկերի շարունակող անանուն հեղինակը գրում է. «Սույն՝ 1821 թվականի փետրվարի 21ի-ն վախճանվեց Գայիսը արքեպիսկոպոսը, վրացին, Թաղայի իր որդին, Աստրախանում, որի թեմակալն էր ինքը: Սա հույժ կրթված մարդ էր՝ նմուտ ուսւերենին, վրացերենին և հայերենին:... Սա վախճանվեց 75 տարեկան հասակում: Սնված ու դաստիարակված էր ներ թագավորի որդի Անտոն կաթողիկոսի կողմից: Սա իր ժամանակին հազվագյուտ էր Վրաստան երկի համար և նրանից հետո, Աստված գիտե, կմնա՞ արդյոք նրա նման որևէ մեկը զիտուն մեր երկրում⁷:

Կասկածից դուրս է, որ Գայիսն իբրև ուսւաց եկեղեցական նվիրապետության ներկայացուցիչ և իր ժամանակի նշանավոր եկեղեցական-քաղաքական գործիչ, շփումներ պիտի ունենար իր ժամանակակից՝ ուսահայոց թեմի առաջնորդ Հովհեփակոպոս Արղությանի հետ Հյուսիսային Կովկասում, Մոլդավիայում և այլուր:

Սերովիք Պատկանյանն իր Աստրախանում ապրած տարիներին մոտ ծանոթություն և բարեկամական հարաբերություն ունենալով Գայիսը արքեպիսկոպոսի հետ, նրան նվիրել է հատուկ սրտառուզ բանաստեղծություն՝ «Առ հայրապետն Գայիսու վերնացրով», ուրիշն անվանում է «Երգաբանող անուան», «Ըմպոն վասն կինաց», «զաւակ» և «կոչունատէր որդի», վերջապես և «յօրինող ծառայք Գայիսի»:

⁶ «Կալմասորա», թ, Թբիլիսի, 1948 թ., էջ 191 (վրացերեն) — և. Մ. Մելքոնիք-բեկի, «Վրաց աղբալուրները Հայաստանի և հայերի մասին», թ, Երևան, 1955, էջ 256 (ընդգծումը մեջբերումի մեջ մերն է: — և. Մ.-Բ.)

⁷ «Նյութեր Վրաստանի պատմության համար՝ ժողված արքայազն Դավիթ Գիորգիի որդու և նրա եղբայրների կողմից»: Թբիլիսի, 1905, էջ 157—158 (վրացերեն) — և. Մ.-Բ., «Վրաց աղբալուրները», թ, էջ 276, 280 (ընդգծումը մեջբերումի մեջ մերն է: — և. Մ.-Բ.)

⁸ «Երգը Սերովիք վարժապետի Պատկանյան», էջ 64—65:

Բանաստեղծությունը, որը 6 տուն է պառունակում, յուրաքանչյուրը 5 տող, հիմնեապես ամբողջը 30 տող, ակրօնափիկա է՝ «Գ-Ա-Յ-Ի-Ո-Յ» գլխատառերով, և գրված է, ըստ Ա. Խազեղյանի, 1813 թվականին։ Ահա և այդ բանաստեղծությունը ամբողջովամբ⁹։

ԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԳԱՅԻՈՒ

Փայիս Հայրապետ,
Սրբազնագոյն դիտապետ,
Ընտրեալ յԱստուծոյ,
Ռուսաց քահանայապետ։
Օրհնեա՛, աղաչեմբ, զերգաբանողս
անուան լու:

Արդար դատելով,
ի կայսերէն ընտրելով.
Ասպետ կաւալեր,
Հովիւ հօտի քո սիրով.
Օրհնեա՛, պազատիմբ, զրմպողս վասն
կենաց լու:

⁹ Բանաստեղծության մեջ ընդգծումները մերս են—
լ. Մ.-Բ.,

Յիսուս Փրկչի
եւ Ալեքսանդր Պավովիչի
Մանօթ սիլելի,
Ռուսաց սուրբ Հովիւ բարի,
Օրհնեա՛, աղերսեմբ, զայրախումբ
զաւակս լու:

Ամաստովեամբ քով,
Աստուածաշնորհ հոգուով
Զաստրախան լնու
Սուրբ մարգարոսք իբր զծով.
Օրհնեա՛, Սրբազն, բոլոր ներկայ
որդիս լու:

Որդիք ըստ հոգով,
Բազմեալք աստէն ի սպաս քո.
Ուրախ եմք ըզքե,
Զարբազան հայրովեամբզ,
Օրհնեա՛, Հայրապետ, զկոշնատէր
որդին լու:

Ուորբ Հայրապետին
Յօհան Ոսկեբերանին
Վարոց համեմատ,
Օրինակ բարեաց ազգին,
Օրհնեա՛, Սրբազն, զյօրինող ծառայ լու:
[1813]

